

ԱՆՔԱՆՈՒՄ ԳՐԱՌԻԹԻՒՆ

| | |
|---------------|--------|
| Պոչխարին | համար |
| Տարեկան | 12 Ժր. |
| Հեղատեղայ | 6 " |
| Արտասահմանի | |
| համար տարեկան | 15 " |
| Հեղատեղայ | 8 " |

| | |
|-------------|--------|
| Առերիկայի | համար |
| Տարեկան | 3 ցր. |
| վեցամսե կայ | 1.50 " |

Դրանով հետևեալ ստորոգյալ
 զին կրեալին համար 40 ս.
 կալ վերջին կրեալի հա-
 մար 20 սակերով հ. կրե
 ճեղ առկա ակազալեկոն
 համար 20 0/0 զեղլ կըլ

Դրանով համար ձևի 10 սակերով

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ԲԱՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ. ՀՐ. ՏՈՒՄԿՈՒՆԻ ԶՈՐԵՔԵՆՔՈՒՆ ԵՒ ԵԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկի
 կուրացուցեալն հա-
 ցիին

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjoum“
 Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
 ձևի
 X 20 ՍԱՆԹԻՄ X
 Պոչխարին համար
 ձևի
 X 15 ՍԱՆԹԻՄ X

Գրութիւնք եւ չեւ տրեւր

«ՇՈՒՈՒԹ» Ի ԲԱՏՆԵՆՔԻ ԳՐՈՒՈՐԸ ԲԱՏՆԵՎԻՆԸ ՊԵՏԻ Ե ԳԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԴԵՂԻ ԿՏԱՆԳԸ

Պրանսական ակադեմիայի ան-
 դամ աշխարհահայակ Անտիոյ
 Պանտը, իր սովորական համ-
 դարտ, խորունկ ու հեզունկան
 ոճով սիրուն նախադրուած մըն
 է տպեր ն. Պ. Պ. մէջ զեզին
 լուսնի գաղափարը չօղափող,
 զոր արժէ քաղաածարէն ծանօ-
 թանալ անոր հական մտքերուն
 հետ:

—Ուստի ճարտանկան պատե-
 րագիր, կրտե Անտիոյ Պրանսը,
 համաշխարհային պատմութեան
 մեծագոյն վարկեանները կը
 յաջնէ Սոյալեզի անոր միտքը
 ըրաններ, պէտք է որ եւրոպո-
 չիներու ծայրագոյն արեւելքի
 մէջ մղած քաղաքականութեան
 հետ ծանօթանանք: Այս քաղա-
 քականութիւնը իրեն հիմք կրն-
 դունէ այն իրողութիւնը թէ՛ Չի-
 նաստանը հարուստ է սակայն
 զորքանակ չունի: Գծիտանեայ
 ազգերը սովորութիւն են գոր-
 ձուցած, երբ այս հակայական
 պետութեան մէջ անկարգապա-
 հօթիւններ առաջ գան, կամ
 բոլորը միասին կամ ամէն մէ-
 կը պառնձին զինուորներ հոն
 ղեկելը: որոնք զոգութեամբ,
 բնաբարուններով, կողոպտանով,
 սրով զէ հօւրով կարգը կը վերա-
 կանգնեն կարծ գազարէ յետոյ
 հրացանով ու թնդանօթով այդ
 երկիրը խաղաղութեամբ տիրե-
 լու համար:

Անկէ Չինացիները ինքզինք-
 նին կամ բնու չեն պաշտպաներ
 և կամ թէ կը պաշտպանե՞նալ
 շատ գէշ կերպով: Ասոնք շատ
 հանցալի կերպով կը թողուն որ
 զիրենք սպաննեն, առանց բնդ-
 գիւտութիւն ցուցնելու: Անոնք
 քաղաքավարի են և ծիսակոն,
 Բայց կը յանգիմանուն թէ՛ եւ-
 րոպացիներու համար քիչ հա-
 մակրանք կը տածեն:

Երբ 1901ին Փէքինի մէջ ան-
 կարգութիւններ ծագեցան, հինգ
 մեծ պետութիւններու միացեալ
 զորքանակը գերմանական Ֆելտ

մարշալի մը հրամանատարու-
 թեան տակ ընդունուած ձեւով
 կարգն աշտեղ վերահաստատեց:
 Յետոյ, երբ ինքզինքնին պատե-
 ռազմական վառքով պակեր է-
 ին, հինգ մեծ պետութիւնները
 ստորագրեցին մին այն բազմա-
 թիւ գաշնագիրներէն, որով Չի-
 նաստանը իր իրաւասութիւնը կը
 կորսնցնէր և թող կուտար որ իր
 գաւառները անոնք իրենց մէջ
 բաժնեն:

Ռուսաստանին բաժին ընկու-
 Մանջուրիան, որու տիրապետու-
 թեամբ ան ճարտանկան վաճա-
 քականութիւնը արգիլեց Գորէ-
 այի մէջ: Զարոնեան, որ 1894
 թուին Չինաստանը թէ՛ ծովի և
 թէ՛ ցամաքի վրայ յաղթեր էր,
 և որ 1901ի պետութիւններու
 խօսադրութեան գործին մասնակ-
 ցած էր, սրագարին և խորհող
 կատարութեամբ մը կը դիտէր
 ամէն բան լափող դանդաղ արջի
 յառաջ խաղացումը: Եւ երբ այս
 հակայ գազանը իր թաթը ան-
 տարբարութեամբ նաեւ ճարտանկան
 մեղուանցէն ներս խոթեց, Դե-
 ղին մեղունները, որոնք միեւնոյն
 ժամանակ թէ՛ թեւեր և թէ խայ
 թոցները պատրաստեր էին ինք-
 նապաշտպանութեան համար՝ այ-
 րոյ ծակոցներով խայթեցին:

Սա գաղութի պատերազմը մըն է,
 կընէր բառացի կերպով ուսու-
 կան բարձր պաշտօնեայ մը իմ
 բարեկամ ժօրժ Պուրտօնին: Եւ
 ամէն մէկ գաղթային կուրի՞հիմ-
 նական սկզբունքն է թէ՛ եւրո-
 պացիին տելի ուժեղ պէտք է ըլ-
 լայ քան այն ժողովուրդը, որու
 հետ ան կը կուրի: Այս տեսակ
 կուրիները այնպէս կը մղուին,
 որ եւրոպացիին թնդանօթաձիգ-
 ներով կը յարձակի, իսկ ասիա-
 ցիին կամ ամբիկեցիին նետով,
 աէզով, պարտատիրով կը պաշտ-
 պանուի: Առաջատ անոնք կր-
 նան քանի մը զոյգ հին ձեւի հը-
 րացաններ ձեռք բերել, ո՞հ,
 այն ատեն եւրոպացու ձեռք բե-
 րած յաղթանակը աւելի փառա-
 պանձ կը դառնայ: Սակայն ոչ
 մէկ ժամանակ ան իրաւունք ունի

եւրոպացու հաւասար մարդուած
 և սպառազինուած ըլլալ: Անոր
 նաւատորմիդը պէտք է որ չուն-
 կերէ, մակոյկներէ և ծառի բու-
 ներէ կազմուած ըլլայ: Եթէ եւ-
 րոպական սպառազինեալ նաւեր
 ալ ձեռք է բերել, անոնք ալ ա-
 մենաքիչը անգործածելի կը մը-
 նան: Եւ եթէ չինացիք իրենց
 ազգամարթերանոցները ապակիի
 կտորներով կը լեցնեն, անոնք
 գաղթային կուրի ոգուն համա-
 ձայն կը վարուին:

Զարոնացիք այդպէս չեն վար-
 ուիր: Անոնք պատերազմ կը մը-
 զեն այն հիմնական սկզբունքնե-
 րով, զոր գեներալ Պոնալը կը
 սորուցնէ Պրանսայի մէջ:
 Անոնք իրենց հակառակոր-
 զը մեծապէս կը գերազան-
 ցեն թէ՛ գիտութեամբ և թէ ըմ-
 բունելու կարողութեամբ: Եւ ո-
 րովհետեւ իրենք եւրոպացիին-
 րէ աւելի լաւ կը պատերազմին,
 ուստի և բոլորովին չեն մտածեր
 երկար վարժութեամբ որբաղնա-
 ցած պատերազմական սովորու-
 թիւններու վրայ, և այդպէսով
 անոնք որոշ չափով ժողովրդա-
 կան իրաւունքներու գէժ կը գոր-
 ձեն:

Ի զուր կը պոռային ամէն կող-
 մերէ թէ՛—«ո՞վ ճարտանցիներ,
 ի՞նչ կըլլար որ դուք ալ պղնձա-
 գոյն ձեր եղբայրակիցներու պէս
 խաղաղ ըլլայիք, որոց յրայ
 մենք փառքով ու պատուով կիշ-
 խենք»—Նմանապէս գոկոտէօր
 ճարլ Ռիչչեն զուր կերպով կմտաք
 մը ձեռք առած կը ցուցադրէր՝
 ճգնելով ապացուցանել թէ ճարտ-
 նացիները անզարգացած մարդիկ
 են, որ անոնք անսուկներու մօ-
 տիկ են կանգնած, թէ անոնք
 մարդկանց և կապիկներու մէջ
 օղակ մը կը ներկայացնեն, թէ
 Ռուսները զարգացած են, հետե-
 ւաբար և քաղաքակրթութեան
 տարօրինակօրէն ընդունակ, ինչ-
 պէս որ ցոյց տուին, երբ հինգ
 հազար Չինացիներ Ամուր գետի
 մէջ խեղդեցին: Թէ ճարտնցի-
 ները ուսմանը տեսնելուն պէս
 վախերէն ծառերու վրայ պիտի

ելենն ապաստանելու: Բայց
 ճարտանցիք անոնցմէ ոչ մէկը
 մտիկ ըրին:

Ինչ որ այժմ ուսմանը ճարտ-
 նական ծոփերուն և Մանչուրիոյ
 վիհերուն մէջ կը վճարեն, ասի-
 կայ ոչ թէ միայն իրենց ագա-
 հուրեան, և արեւելքի մէջ գոր
 ծագրած բարբարոս քաղաքակա-
 նութեան արդիւնքն է, այլ և
 ամբողջ եւրոպայի գաղթային
 քաղաքականութեան: Ինչ որ
 ուսմանը կը քաւեն, ասոնք ոչ
 թէ միայն իրենց մեղքերն են,
 այլ և պատերազմիկ և վաճառա-
 կան բովանդակ քրիստոնէու-
 թեան մեղքերն են: Զարոնացիք
 Եալուն կանցնին և ուսմանը
 Մանչուրիոյ մէջ կը ջարդեն հե-
 րոսական ճշտապահութեամբ, ա-
 նոնց նաւատորմիդը ամենակա-
 տարեալ փայլով մը կը ջնջէ եւ-
 րոպական նաւատորմիդ մը, և
 յանկարծ մենք կը նշմարենք թէ
 մեզ վտանգ կը սպառնայ: Բայց
 եթէ իրօք այդ վտանգը կսպառ-
 նայ, ո՞վ եղաւ զայն ստեղծողը:
 Զարոնացիները չէին, որ եկան
 ուսմանը փնտռելու: Գեղիները
 չէին որ ճերմակներու մօտ եկան:
 Մենք այժմ գտանք զեզին վը-
 տանգը: Սակայն բաւական երկար
 տարիներ է ի վեր է, որ ասիա-
 ցիները կը ճանչնան ճերմակ վը-
 տանգը: Ամառային պալատի
 թաւանը, Փէքինի կտորածը,
 Պոկոկէնչէնքի մահախեղդը,
 Չինաստանի մաս մաս ընելը—
 կարճս թէ բաւական չէին, որ
 պատճառ ըլլային Չինացիներու
 ապստամբելուն:

Եւ արգեօք ճարտանցիք ինք-
 զինքնին ապահով կըզգային
 Պորտ Արթուրի թնդանօթներուն
 տակ: Կենք ստեղծեցինք ճեր-
 մակ վտանգը: Զերմակ վտանգն
 ալ ստեղծեց զեզին վտանգը:
 Այդ կարգի շղթայումներ, որոնք
 հինաւուրց ճակատագրական ան-
 հրաժեշտութիւններուն իբեց
 մէջ, աշխարհը կը կառավարեն, կը
 ցուցնեն ցօլացու՞մը աստուածա-
 յին արդարագատութեան, և
 մարդ կը հիանայ տեսնելով մարդ-

կանց ու աստուածներու ճակատագրի խորամանկ կանխամատուցութիւնը. երբ, օրինակ, կը տեսնէ մարդ թէ ինչպէս ճարտեան, որ քիչ ժամանակ առաջ Ձինացիներու և Բորէացիներու հանդէպ այնքան անգութ եղաւ, ճարտեան, որ եւրոպացոց ոճ-րագործութեանը մասնակցեցաւ, ատկէ որ և է շահ մը չը հանելով, այնօր Ձինաստանի վրէժխնդիրն ու դեղին ցեղի յոյսը կը դառնայ Յամենայն գէպս առաջին նայուածքէն կարելի չէ նկատել թէ՛ դեղին վտանգը. ուրկէ եւրոպական քաղաքատնտեսագէտները կը դողան, երբէք կարող չէ համեմատուիլ ճերմակ վտանգին հետ, որ կը ծանրանայ Իսիոյ վըրայ. Ձինացիները գէպի Փարիզ, Վիէննա, Պերլին կամ Պէտերսբուրգ չեն զրկեր միսիօնարներ, որպէսզի այդ տեղերը իրենց կրօնքը քարոզեն և անկարգութիւն առաջացնեն եւրոպական գործերու մէջ. Որ և է չինական արշաւախումբը չէ եկեր խարխիւ ձգեր Բիպրոնի ծոցին մէջ. Քըրանսական հասարակագետութենէն պահանջելու, մասնաորիններէ բաղկացած դատարանի մը իրաւունքը, որու գործը պէտք է ըլլայ, Ձինացիներու և եւրոպացիներու մէջ ծագած վեճերը քննել:

Ծովակալ Թօքօն տասներկու զրահաւորներով չի ուժակոծեր Պրեստի նաւահանգիստը, որպէս զի ճարտեան վաճառականութեան համար գիւրիւթիւններ ձեռք բերէ Պրանսայի մէջ. Պըրանսական ազգայնականներու ծաղիկը, մեր ընտանիքի Պօքսերները՝ չեն կոխած չինական և ճարտեան գեսպանութիւնները, և ատոր համար ալ մարշալ Օնաման դաշնակցած բանակի մը դըլուխն անցած հեռաւոր Արեւելքէն չէ եկեր Փարիզի պուլվար Մատրէնը կոխել՝ օտարատեսաց պօքսերներու պատժուիլը պահանջելու: Կն Վերսայը բարձրագոյն քաղաքակրթութեան մը տնտեսով կրակի չէ՛ տուած. նոյնպէս ասիական մեծ պետութիւնները Լուվրի իւզաներկ նկարներն ու Շան գ'էլիզէի պալատի սեղանի զարդերը գէպի Թօքիօ կամ Փեքինի չեն փախցուցած:

Ո՛չ, նոյնիսկ պարոն Էտմօն-Թէրին կը խոստովանի թէ՛ դեղինները բաւականին քաղաքակրթուած չեն ճերմակները հաւատարմութեամբ ընդօրինակելու համար: Ան նոյնպէս չը հաւատար թէ՛ անոնք երբ եւրոպացի քաղաքային և անոնք ինչպէ՞ս պիտի կարողանան մեր առաքինութիւնները իւրացնել. Չէ՞ որ քրիստոնեաներ չեն. Բայց տեղեակ անձինք կը կարծեն թէ՛ դեղին վը-

տանգը, նոյնիսկ եթէ միայն տնտեսական բնաւորութիւն կրէ. նորէն սարսափելի է. երբ Բորէան ու Ձինաստանը օր մը ճարտեանցիներէն կազմակերպուին, այն ժամանակ մեզ աշխարհի բոլոր շուկաներու հրապարակներու վըրայ պիտի սպառնան մէկ ստակալի. հրեշային, հակայական և զզուելի մրցումով, որ քաղաքատնտեսութեան մազերը կը ցցուին, երբ ատոր մասին կը մտածեն. Այս պատճառով ճարտեանցիք ու չինացիք որքան որ կարելի է հեռու պէտք է մնան. Այս անտարակոյս է. Սակայն ասոր հետ միաժամանակ Ամերիկայի միացեալ Նահանգներու գէմ կուր պէտք է յայտարարել, որպէս զի այնտեղի երկաթի վաճառականները իրենց երկաթեղէն ու պողպատեղէն արտադրութիւնները աման չը ծախեն մեր գործարաններէն, որոնց երկաթեղէնները պակաս գիւմացիուն են:

Սակայն և այնպէս ճշմարտութիւնը ըսենք. Դոպրինք վարկեան մը մենք մեզ շողոքորթելէ. Հին եւրոպան և նոր եւրոպան — որովհետեւ այսպէս կարելի է ճշտութեամբ անուանել Ամերիկան — տնտեսական կուր մրցուցին. Ամէն մէկ ազգ ուրիշ ազգի մը հետ տնտեսական կուրի մէջ է. Ամէն տեղ արտադրութիւն աշխարհութեան գէմ կը կուրի. Սովորութիւն է դարձած գանգաւորիլ, երբ շուկային հըրպարակին վըրայ կը տեսնենք նոր արդիւնաբերութիւններ յետուած, որոնք կը մըրցին և մեզ կը խանգարեն. Հառաչելէն սակայն ի՞նչ օգուտ. Մենք միայն ամենաուժեղներու իրաւունքը կը ճանչնանք. Թօքիօն թոյլ է, ուրեմն և անիրաւ, և այդ անոր կը զգացնենք. ուժեղ է եթէ, ուրեմն և իրաւունք ունի, և որ և է առարկութիւն մը չենք ընէր իրեն. Եւ արդեօք գոյութիւն ունի՞ ժողովուրդ մը, մի հատիկ ժողովուրդ մը, որ իրաւունք ունենար արդարութեան անունով իրօսելու:

Կը վախնան թէ՛ երբ ճարտեան մեծ գառնայ, Ձինաստան ալ պիտի կարգաւորէ և սորուցնէ ինքնապաշտպանութեան և սեփական հարստութիւններէն օգտուելու եղանակը:

Կը վախնան թէ՛ այդպէսով ուժեղ Ձինաստան մը երեւան պիտի դայ. Կսկէ ոչ թէ պէտք է վախնալ, այլ ընդհանուրի շահերու համար ուղի բանը պէտք է ցանկալ. Հը՞ որ ժողովուրդները կը նպատեն աշխարհի ներդաշնակութեանն ու հարստութեանը թոյլ ժողովուրդները, ինչպէս Ձինաստանն ու Թուրքիան, մըշտական պատճառներ են իրարանցումի և վտանգի. Բայց կա-

րելի չէ շտապել. ոչ յոյսի և ոչ ալ վախի մէջ. Ճարտեան յալթական կը մնայ, և ձեռք կառնէ հինաուրց դեղին ցեղի վերածնութեան գործը, այնժամանակ այդ այնքան ալ շուտ օրէն չի կատարուիր. Ժամանակ պէտք է անցնի մինչեւ որ Ձինաստանը ոտքի կանգնի. իր գոյութիւնը չէ շտէ. Ձինաստանը իր գոյութեան գիտակցութիւնը չունի. և քանի դեռ չունի Ձինաստանն ալ գոյութիւն չունի. Միայն ժողովուրդ մը կայ. եթէ ան ալ իր գոյութեան զգացումը ունի. Միլիոններով ու միլիոններով չինացիներ կան, բայց իրենք այդ չը գիտեն. Մինչեւ որ անոնք չը հաշուուին, հաշուի մէջ չեն կրնար մտնալ. Եւ դեռ համարուելով անոնք գոյութիւն ունեցած չեն կրնար ըլլալ. — «Թիւ դրէք» — այս է առաջին պատուէրը, որ երթասպան իր զինուորներուն կուտայ, զօք լը սորուցնէ. Ասով անիկա անոնց կը սորուցնէ ընկերական կեանքի սկզբունքը. Բայց այնքան շատ միլիոններով մարդիկ դեռ երկար ժամանակ կը պահանջեն թուակիր դառնալու:»

ՍԱՍՈՒՆԻ ՎԻՃԱԿ

«Փրօ Արմէնիան» հաղորդեր է «Թան» լրագրին իր Մուշէն թիֆլիսի վրայով ստացած հետեւեալ հետազոտութեան յայտարարութիւններուն, մինչև հիմա Սասունի շրջանին մէջ դեռ ոչ մէկ տուն է վերաշինուած: Սուլթանի նուիրած հինգ հազար օսմանեան ոսկին, որով պէտք է վերաշինուէին ապստամբութեան ժամանակ հրդեհուած հայկական գիւղերը, յատկացուած են Սասունի մէջ զօրանցներու շինութեանը: Այս աշխատանքին կառավարութիւնը կստիպէ Մուշի գաւառի բնակչութիւնը իր անասուններով օգնել:

Սասունցիներու վեճակը շատ խղճալի է: Անոնք մինչև հիմայ դեռ օգնութիւն ստացած չեն. Ձինուորներն ու քուրսերը կը շարունակեն իրենց կործանումի արարքները:

Կ. Պօլսէն սեպտեմբեր 3 թուականով կը հետազոտի «Թան»:

— Սեպտեմբերի վերջին Հայաստանի մէջ ընդհանուր ապստամբութիւն մը յայտարարուած ըլլալուն համար, չորրորդ զօրարանակի սպանագինու մը հրամայուած է. Ամենախիստ պատուէրներն են տրուած որ եւ է ապստամբական միտում անյապաղ ճնշելու:»

ՀԱՅՎԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՍՆԵՐ

Ըստ «Ռէյտի» գործակալութեան Վանէն ծանր լուրեր են հասած Կ. Պօլիս:

Օգոստոսի 31 ին հայ ապստամբները քաղաք են մտեր և չորս տներու մէջ ամրացեր, ուր և

գիրքեր են բռներ: Կուր մը ծագեցաւ զօրքի հետ, որ երկու սպանուած ունեցաւ. Ուրիշ քսան հոգիներ ալ սպանուած են:

Կառավարական պաշտօնանեքը բազմաթիւ տներու կրակ տըռին. որպէս զի զօրագունտը աւելի գիւրութիւն ունենայ կրակել ապստամբներու բռնած տուները:

Քաղաքի մէջ սարսափ կը տիրէ, և բազմաթիւ հայ բնակիչներ կը փախչին, մինչդեռ ուրիշները եկեղեցու և շրջակայ վանքերու մէջ կապաստանին:

Կառավարիչները կը հազորդեն թէ՛ ուրիշ խմբեր կը պարաստուին պարսկական սահմանն անցնելու:

Վանի անգլիական փոխ-հրկատար, որ Սասուն շարժումներու առթիւ Մուշ էր գացած՝ հրաման է ստացեր Վան վերադառնալ:

Նոյն բովանդակութեամբ «Վե. չերնա պօշտախ» հրատարակած հեռագրին մէջ ըսուած է նաև թէ՛ Վանի ապստամբական խումբը բաղկացած է 1050 հոգիէ, և թէ՛ փոխստականներու թիւը 5000 ի կը հասնի:

Վերջին պահին Կ. Պօլսէն Սօֆիայի վրայով «Թան»-ին կը հետազոտի:

— «Վանի հրկատարական տեղեկութիւնները կըսեն թէ՛ հայ յեղափոխականները կը շարունակեն գիւմարել զօրքերուն, որ մինչև երեկ դեռ անկարող էին հայերը յաղթել կամ ցրուել, Բընակիչները տաճիկ ամբոխէն և զօրքերէն (2000 զօրք) վախնալով փախեր են և վանքերն ապաստաներ. Բ. Գուրը կը հակառակ թէ՛ ապստամբական խումբը քաղաքի շրջականերն է երեւացեր, մինչդեռ հրկատարական տեղեկութիւնները կը հաստատեն թէ՛ հայ յեղափոխականներու առաջին յարձակումը եղաւ քաղաքին մէջ, Ֆրանսական հրկատարարանէն հինգ հարիւր մէթր հեռու. Երեկ առասկան գեսպանը երկար տեսակցութիւն մ'ունեցաւ Մեծ-Վեզիրի հետ Հայաստանի գրութեան առթիւ:

ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒՆԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

—(0) —
ԺԱ.

Թուրք և Սասուն ին 1902-ին

Թուրք կառավարութիւնը 1900-էն ստիպի Սասունը ամէն գարնան խիստ պաշարուած ենթարկել սովորութեան կարգ անցուց ալիս:

Հազիւ 1901 ի պաշարումէն հետքոր վերջացաւ ձեռուտն «Սոտեալու» գրեթէ — Սասունցին քիչ մը շուշ պիտի առնէր, ահա՛ նորէն անոր դանբը կը փակուի, երթեւեկը կար-

գրուի և վտանգն ու աւերը կ'ըստ... 1902ի մարտին, երկրէն դուրս...

Տեղի կառավարութիւնը սկսած է պարտաւար կեանքով ապրել... Սեպտեմբեր 1902ի մարտին...

Իսկ օգոստոս 7ին զարնուած հեռուեցաւ հեռագրի կատարուած իրողութիւնը...

Մուշի կառավարութիւնը ուղարկեց զԿար Սասունի շրջակայքը հինգ վայր զօրք...

Հետեւեցէ՛ք հիմա հետեւեալ նամակին—գրուած Մուշէն յունիս 1ին— որ թէ վերի հեռագրին ճշգրտութիւնը...

Անա՛ւ նամակը... կարծես թէ բաւական չէին քրտական հայաձանքեր...

Կառավարութեան ծրագիրը... այն է որ թիւրք կառավարութիւն այժմ մէկ կարելի և անկարելի միջոց ձեռք է առած քանդել...

Թուրք կառավարութեան այս սեպտեմբերի համար, յատուկ հրահանգով եկած Մուշ և Մշոյ զաշտի գիւղերն են լեցուած 300է աւելի գաղթական շէրքէզներ...

Միւս կողմէ այս օրերս տեղս եկած են Բուլանըլի, Մանազկերտի, Խընուսի և վարդօի համարիչ գուճտուրու պետերը...

Թեան բարձրագոյն հրամանաւ լուր տրուած է Սասուն և ներքին դաշտի քուրդ աշիրէթներին որ գանե իրենց ընտանիքներով և խաշիրէթներով...

Սասունի արեւմտեան-հարաւ և հարաւային-արեւելեան մասերը շրջապատուած են հետեւեալ արիւնաբքով, ընչաքայց, բարբարոս և թափառաւոր շիրիկ աշիրէթներով...

Ա. — Սասունը և շրջակայքը կը լեցնէ շէրքէզներով, թուրքերով, քուրդերով... Բ. — Կը քաջալերէ աս տարրերը Սասունցիին վնաս հասցնելու համար...

Ս. — Սասունը կրկին խիստ կերպով պաշարման կ'ենթարկէ... Այս թուականի վտանգն ալ անցաւ ներքին յեղափոխականներու նրահանգով...

Ու Սասունի հորիզոնէն շարդի և թալան-թուրանի ուրուականը կրկին անժամատպէս շալածուեցաւ... Անա՛ւ թէ ի՞նչ կ'ըզէ ատ մասին...

Մուշի կողմերը վերին աստիճանի անհանգստացնող էր վայրկեան մը... Չորս քիւրդ ցեղեր, կանոնաւոր զօրքերու հետ մէկտեղ Սասունի լեռնավայրը...

պատած էին ֆէտայիներու բանակին տիրելու և Սասունի ըմբոստները միանգամ ընդմիջտ օջնչացնելու համար... Եւրոպական երեք հիւպատոսական գործակալներու գալուստը բարձրար...

Կառավարութիւնը չի յաջողելով այս անգամ ալ իր գազանային դերին մէջ, գիւնց իր սովորական օյինպագութեան սթրապան տիպով...

Կը յիշէ՛ք, ի՞նչ խելացի և ջախջախիչ պատասխան մը տուին յեղափոխականները Պէճրիկեանին...

... Իսկ եթէ անլուրի կը մնանք մենք և կառավարութիւնը զարձեւալ կը շարունակէ իր հայաշիրիջ քաղաքականութիւնը...

Ֆիլիպպ Ժիրտյոյ

ԱՅՏԵՆԱՍՍՈՒԹԻՒՆ, ՄԸ

Ամսոյս 22-ին անդուս Դաշնակցական երթակով իտէի հրաւիրանք, քաղաքս հիւր գտնուող Պ. Մարգարեանին ասեանախօսեց Ազգային վարժարանի սրահին մէջ...

Պարոնը յայտնեց թէ հայ ցեղը իր գոյութիւնը պահպանելու համար բընական օրէնքով պահանջ զգաց վերածննդու և Այսպէս եղաւ հայ յեղափոխութեան ծագումը...

Բացատրեց նաեւ յեղափոխական կռուի յաջող և անյաջող շրջանները... Անյաջող շրջաններ որ հակա-յեղափոխական թույլ տարրերը մեր մէջ սկսան ազդուել կռկոսցնելու բարձրացնել և յեղափոխական գաղափարի վրայ դամբանականներ կարգու և բայց գաղափարը որուն մէջ կայ Աստուածային շուք և կայծ՝ յաղթանակեց, յեղա-

փոխութեան իշխումները և մակարոյձները սխալած էին, այսօր հայ յեղափոխութիւնը կը գտնուի ոյժի և բարձրութեան վրայ... Անդրանիկ և իր ֆէտայիները կը թնդացնեն Սասուն լեռները...

Ասեանախօսը յուսադրեց վառ եւ աւանդով, որ ամեն մէկ մարդ իր ոյժի չափով աջակցի Սուրբ դործին, որի համար մեր գիտակից երիտասարդները չեն խնայած իրենց ծաղիկ կեանքը...

Ասեանախօսը զիւրանագիտութեան վրայ քննադատական ակնարկ մը նետելով, որ Անգլիոյ և Ֆրանսոյի բարեկամութիւնը մեզ օգտակար պիտի ըլլայ...

Սոսելով ուսս բռնակալութեան և ցարդով վրայ սրտագին փափագ յայտնեց որ Մանջուրիան դառնայ սլավոն բռնութեան համար ընդարձակ գերեզման մը...

Այդ կը պահանջէ հայերու, ֆրանստացիներու, լեհերու ազատութեան շահերը...

Ասեանախօսը ի վերջոյ ծանրացաւ Պուլկարիոյ հայ զարոցներու անկանոն անկազմակերպութեան և անձրագիր դրութեան վրայ...

Այս յօդուածով կուզենք հայ հասարակութեան ուշադրութիւնը անդրադարձնել վատասարաւ թուամեանի անխիղճ ու անմարդավայել արաքներուն, որոնց վրայ, ցաւ ի սիրտ, ստիպուած ենք աւելցնել աւելի տըխուր ու վշտառիթ իրողութիւն մը, որ իւր արգահատական սոյժմէութեամբ միւսները կը գերազանցէ... Թուամեանի նախկին որբերէն մէկը՝ Կարապետ Ուզգիւսեան, վեց ամիսէն աւելի անգլիական հիւանդա-

ՏԻՐԱԶԻԵԹԻՒՆ ԼՈՒՐ ՄԸ ԼՕՆՏՕՆԷՆ

Այս յօդուածով կուզենք հայ հասարակութեան ուշադրութիւնը անդրադարձնել վատասարաւ թուամեանի անխիղճ ու անմարդավայել արաքներուն, որոնց վրայ, ցաւ ի սիրտ, ստիպուած ենք աւելցնել աւելի տըխուր ու վշտառիթ իրողութիւն մը...

